Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«11» 11 2021թ.

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

2020-2025 ԹԹ. ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ

ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ

2020-2021 ԹԹ.

Համալսարանի 2020-2025 թթ.-ի ռազմավարական ծրագրի և գործողությունների պլանի արդյունքների գնահատում իրականացնելու նպատակով Ռազմավարական պլանավորման հանձնախումբը մշակել է համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ-եր)՝ ըստ 7 հիմնական ոլորտների.

1. ***Կառավարում և վարչարարություն,***
2. ***Կրթական գործունեություն,***
3. ***Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ,***
4. ***Ուսանողակենտրոն քաղաքականություն,***
5. ***Արտաքին կապեր և միջազգայնացում,***
6. ***Արդիական հետազոտություններ և նորարարություն,***
7. ***Որակի ապահովման ներքին համակարգ:***

ԱԲՀ-ի ստորաբաժանումների 2020-2021 թթ. գործողությունների հիման վրա հավաքագրվել, վերլուծվել և ամբողջականացվել է համալսարանի մեկ տարվա գործունեությունը՝ ըստ ընդունված ԳԱՑ-երի:

ՆՊԱՏԱԿ 1.ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 1.1. Ապահովել ստորաբաժանումների միջև լիազորությունների և գործառույթների արդյունավետ ու հստակ գործառություն:

Ցուցանիշ 1. Գիտխորհրդի և ռեկտորատի նիստեր: Այս ցուցանիշի համար նախատեսված է տարեկան առնվազն 12 նիստ (ամսական առնվազն մեկ նիստ): ՄՌԿ և ընդհանուր բաժնից ստացված տեղեկատվության համաձայն բոլոր նիստերն իրականացվել են ուսումնական տարվա սկզբին հաստատված ժամանակացույցի համաձայն:

(Հիմք՝ Հավելված 1.Գիտական խորհրդի նիստերի օրակարգեր)

Ցուցանիշ 2. ԱԲՀ-ի արտաքին գործոնների ուսումնասիրության ուղեցույց: Հաշվի առնելով այն, որ բուհերի գործունեության վրա էական ազդեցություն են թողնում արտաքին և ներքին միջավայրերի փոփոխությունները, Համալսարանի կառավարման գործընթացում կարևորվել է նրա վրա ազդող առանցքային գործոնների վերհանումը, ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակում մշակվել և հաստատվել է «Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության համար կիրառվող գործիքներ և մեթոդներ» ուղեցույցը, իրականացվել է Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն, որն ընդգրկել է 1991-2020թթ. ընկած ժամանակահատվածը:

(Հիմք՝ Հավելված 2.1 «Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության համար կիրառվող գործիքներ և մեթոդներ» ուղեցույցը,
Հավելված 2.2 Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ազդեցության վերլուծություն):

Ցուցանիշ 3. Ֆինանսների բաշխման քաղաքականություն. Համալսարանի ֆինանսների բաշխման և տնօրինման նոր քաղաքականությունն իր մեջ ներառում է հաշվապահական հաշվառման խնդիրները, նպատակները, որոնք համապատասխանում են ԱԲՀ-ի 2020-2025 թթ. ՋՌԾ նպատակներին:

(Հիմք՝ Հավելված 3. 2020-2021թթ. Բյուջեն և հաշվապահության տեղեկանքը)

Ցուցանիշ 4. Էթիկայի կանոնակարգ և հանձնաժողով. 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակում գիտական խորհրդով հաստատված հետևյալ փաստաթղթերը՝ «ԱԲՀ-ի էթիկայի» և «ԱԲՀ-ի էթիկայի հանձնաժողովի ձևավորման և գործունեության» կանոնակարգերը, կարելի է ասել, չեն կիրառվել:

Էթիկայի հանձնաժողովը վերանայել և որոշակի փոփոխություններ է արել ԱԲՀ-ում գործող «Ներքին կարգապահական կանոններում»: ԱԲՀ-ի ներքին կարգապահական

կանոնների խմբագրումն անհրաժեշտություն էր դարձել մի շարք հանգամանքներով պայմանավորված: Նախ՝ այն վերջին անգամ վերանայվել էր 2014 թ.-ին, բացի այդ վերջին տարիներին ընդունվել էին բազմաթիվ որոշումներ ինչպես ԿԳՄՄՆ-ի, այնպես էլ համալսարանի կողմից, որոնք իրենց արտացոլումը պետք է գտնեին փաստաթղթերում: Նաև համալսարանում առաջ էին եկել նոր պահանջներ, խնդիրներ, որոնք ևս կանոնադրական փոփոխություններ էին պահանջում:

(Հիմք՝ Հավելված 4. Ներքին կարգապահական կանոններ հաստատված՝ 15.02.2021թ.)

Ցուցանիշ 5. ՊԻԳԲ փուլ բոլոր գործընթացներում: Համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացները նպատակաուղղված են որակի մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, որն իր մեջ ներառում է գործընթացների իրականացում՝ հիմնված ՊԻԳԲ կառավարման սկզբունքի վրա: ԱԲՀ-ի կազմակերպական կառուցվածքի և ստորաբաժանումների տարեկան պլանի համաձայն կազմված 2020-2021 ուստարվա հաշվետվություններն իրենց ձևաչափով տարբերվում են նախորդ տարիների կատարողականներից: Սկսած 2020-2022 ուստարվանից Որակի ապահովման հանձնաժողովը կիրականացնի հաշվետվությունների արդյունքների վերլուծություն՝ բացահայտելով ձեռքբերումներն ու խոչընդոտները, տրամադրելով անհրաժեշտ խորհրդատվություններ և բարելավման առաջարկություններ համապատասխան մարմիններին: 2020-2021 ուստարվա ընթացքում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի կողմից իրականացվել է ամբիոնների տարեկան կատարողականների համառոտ վերլուծություն, որի վերաբերյալ զեկույցը նախատեսվում է լսել Համալսարանի գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում:

(Հիմք՝ Հավելված 5.1 ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի պլան,
Հավելված 5.2. ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի տարեկան կատարողական,
Հավելված 5.3. Ամբիոնների 2020-2021 ուստարվա կատարողականների վերլուծություն)

Ցուցանիշ 6. Գործող ՄՌԿ քաղաքականություն: Համաձայն 26.03.2020թ. գիտխորհրդով հաստատված ՄՌԿ քաղաքականության՝ ԱԲՀ-ում մասնագետների հավաքագրումն իրականացվել է պաշտոնի անձնագրի պահանջներին համաձայն:

ՄՌԿ և ընդհանուր բաժնի կողմից ներկայացված պաշտոնի անձնագրի համապատասխան ներկայացվում է տարեկան հաշվետվություն:

(Հիմք՝ Հավելված 6.1. Պաշտոնի անձնագիր,
Հավելված 6.2. ՄՌԿ և ընդհանուր բաժնի տարեկան հաշվետվություն)

Ցուցանիշ 7. ԱԲՀ կառավարման միասնական տեղեկատվական համակարգի առկայություն:

Ցուցանիշ 8. Համալսարանի կատարելագործված տեղեկատվական համակարգ:

Ցուցանիշ 9. ԱԲՀ կառավարման ոլորտում գործող արդիական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:

Տեղեկատվական համակարգը հնարավորություն է տալիս կազմակերպել փաստաթղթերի կառավարումը, շահակիցներին և հասարակությանը տեղեկացնել համալսարանի որակի գործառույթներին:

ԱԲՀ-ն համացանցային տիրույթում ներկայանում է www.utm.am պաշտոնական կայքով, ինչպես նաև facebook սոցիալական ցանցի միջոցով՝ https: //www.facebook.com/UniversityofTraditonalMedicine:

ԱԲՀ-ի ներքին և արտաքին շահակիցներին իրազեկումն իրականացվող ՄԿԾ-ների, իր գործունեության և արդյունքների մասին ապահովում է համալսարանի կայքի պատասխանատուն:

Համալսարանում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը չենք կարող համարել արդիականացված, քանի որ այսօր ԱԲՀ-ն իրականացնում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն միայն հետևյալ կերպ՝

- *պաշտոնական էլ. հասցե՝ info@utm.am-ի միջոցով.*

2020-2021 ուստարվա ընթացքում ստացել է մոտ 900 նամակ, գրություն ԿԳՄՄՆ-ից, ՈԱԱԿ-ից, ԱՓՇԱՏԿ-ից, հայաստանյան և արտերկրի համալսարաններից, հասարակական կազմակերպություններից և այլ շահագրգիռ կազմակերպություններից, ելքը կազմել է՝ 886 գրություն:

- Բոլոր ստորաբաժանումների համակարգիչները միացված են ներքին ցանցին. Sharing թղթապանակն առկա է բոլոր համակարգիչների էկրանին, սակայն տեղեկատվական ցանկացած համալրման մասին անհրաժեշտություն է լինում տեղյակ պահել հասցեատիրոջը:
- ԱԲՀ-ն 2021-2022 ուստարվանից **ՄԿԿՏՀ** ծրագրի միջոցով ինստիտուցիոնալ տվյալների, ՏՀՏ հագեցվածության, ֆինանսական ռեսուրսների կառավարման, ՄԿԾ-ների, պրոֆեսորադասախոսական կազմի, այդ թվում՝ թեկնածուական և դոկտորական կոչումների, ուսանողների, քննաշրջանի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հավաքագրման և պահպանման համար նշանակել է պատասխանատու անձ՝ «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (ԿԿՏՀ-ի գլխավոր ադմինիստրատորի) հետ համագործակցելու և համալսարանի տվյալները պատշաճ հավաքագրելու և ներբեռնելու համար:

- Համալսարանում առաջնահերթ են համարվում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացները: Գնահատման օբյեկտիվությունն ապահովելու նպատակով շարունակվում է **«Կրեդիտային համակարգ»** էլեկտրոնային ծրագրի կիրառումը, որը ոչ միայն մատչելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող տվյալների մեծածավալ բազան, (ներառում է ուսպլանները՝ ըստ կրթական ծրագրերի, ուսանողների, շրջանավարտների անձնական տվյալները, առաջադիմությունը, ստու-

գարքային և քննական տեղեկագրերը, ակադեմիական տեղեկագրերը), այլև ապահովում է օբյեկտիվ և թափանցիկ գործընթաց: Կիսամյակից կիսամյակ ծրագիրը համալրվում է ուսանողների գնահատականներով՝ կիսամյակային, տարեկան, արդյունարար ՄՈԳ-ի ավտոմատ հաշվարկով, իսկ տվյալներն օգտագործվում են ոման վարձերի զեղչման, ռոտացիայի, ակադեմիական տեղեկագրերի տրամադրման ժամանակ:

(Հիմք՝ «Կրեդիտային համակարգ» էլեկտրոնային ծրագիր)

Ցուցանիշ 10. Կառավարման բոլոր մակարդակներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավում:

2020-2021 ուստարվա ընթացքում համալսարանում շատ գործողություններ իրականացվել են հատկապես ներքին շահակիցների մասնակցությամբ: Այդ են վկայում ԱԲՀ-ի ռազմավարական զարգացման պլանավորման, ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման հանձնաժողովներին, ամբիոնի նիստերին, Գիտխորհրդի և ռեկտորատի նիստերին նրանց մասնակցությունը, ելույթները:

(Հիմք՝ Հավելված 10.1.Կառավարման և Գիտական խորհրդի կազմի հրամաններ, Հավելված 10.2. Նիստերի արձանագրություններ)

Ամփոփում

*Այսպիսով՝ ըստ Համալսարանի ռազմավարական ծրագրի **«Կառավարում և վարչարարություն»** չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներն իրականացվում են և միտված են գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-ի) ձեռքբերմանը:*

ՆՊԱՏԱԿ 2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 2.1. Վերանայել կրթական գործող ծրագրերը՝ համապատասխանեցնելով ազգային և միջազգային կրթական չափորոշիչներին ու աշխատաշուկայի պահանջներին:

Ցուցանիշ 1. Գործող ՄԿԾ-ի վերաբերյալ վերլուծական զեկույց:

Այս ցուցանիշը չենք կարող գնահատել, քանի որ սահմանված ժամկետում կրթական ծրագրերի մշտադիտարկում չի արվել, սակայն հավաքագրվում է տեղեկատվություն (2020-2021 ուստարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագիրն ավարտած առաջին շրջանավարտների շրջանում անցկացված հարցման վերլուծությունները, ավարտական քննական հանձնաժողովի զեկույցների վերլուծությունը, հավատարմագրող խմբի զեկույցները, աշխատակազմի և ուսանողների հետադարձ կապը, ուսանողների առաջընթացը, ուսանողներին հասանելի նյութերը՝ ՄԿԾ-ի նկարագրությունները, օտարերկրյա (հնդիկ) ուսանողներին FMGE քննության նախապատրաստելու նպատակով **/www.natboard.edu.in/** միջազգային կազմակերպության հետ հանդիպումները և պայմանավորվածությունները և այլն) 2021-2022 ուստարվա ավարտին մշտադիտարկում իրականացնելու նպատակով:

(Հիմք՝ Հավելված 2.1.1. Ավարտական քննական հանձնաժողովի զեկույցների վերլուծությունը:

Այս ցուցանիշի ապահովումը պլանավորվում է:

Ցուցանիշ 2. Վերապատրաստված դասախոսական կազմ:

Այս ցուցանիշը ևս ապահովված է, որի վերաբերյալ կատարողական զեկույց է ներկայացվել ԱԲՀ-ի գիտական խորհրդին:

(Հիմք՝ Հավելված 2.1.2. Վերապատրաստման վերաբերյալ ԳԽ արձանագրություն)

Ցուցանիշ 3. Կրեդիտային համակարգի ուղեցույց: Վերապատրաստված անձնակազմ:

2015-2016 ուստարվանից ԱԲՀ-ում գործում է «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը», սակայն ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի վերանայման արդյունքում (2019-2020 ուստարի) կատարված փոփոխությունները նշված կարգում դեռ չեն ներառվել: Ինչևէ, հիմնական խնդիրը, ինչպես փորձագիտական խումբն էր իր զեկույցում նշել, ***կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման գործընթացների*** վերաբերյալ դասախոսական կազմի իրազեկվածությունն ապահովելն էր: Այդ նպատակով իրականացված վերապատրաստման վերաբերյալ ԱԲՀ-ի գիտխորհրդին ներկայացվել է զեկույց:

(Հիմք՝ Հավելված 2.1.2. Վերապատրաստման վերաբերյալ ԳԽ արձանագրություն)

Ցուցանիշ 4. Վերանայված ՄԿԾ մշտադիտարկման կարգ:

Այս ցուցանիշի ձեռքբերումը կարող ենք գնահատել ՄԿԾ ղեկավարի՝ ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խմբի կողմից 2017թ.-ից գործող «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի» համաձայն իրականացված աշխատանքների վերաբերյալ զեկույցի:

(Հիմք՝ Հավելված 2.1.4. ՄԿԾ ղեկավարի զեկույց)

Ցուցանիշ 5. Բենչմարքինգի իրականացման կարգ:

Ըստ «Բենչմարքինգի իրականացման քաղաքականության և ընթացակարգի» կազմակերպված ՄԿԾ-ների բենչմարքինգի արդյունքները ներկայացված են կատարողական զեկույցում:

(Հիմք՝ Հավելված 2.1.5. Բենչմարքինգի զեկույց)

Ցուցանիշ 6. Գիտելիքների ստուգման և գնահատման վերանայված կարգ:

Այս ցուցանիշին համապատասխան առկա է համապատասխան ԳԽ-ի 2019-2020 ուստարվա նիստի արձանագրություն: Մշակվել և 04.02.2020թ.-ին գիտխորհրդով հաստատվել է «ԱԲՀ-ի հեռավար ուսուցմամբ ուսումնառողների ամփոփիչ գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգը»:

(Հիմք՝ Հավելված 2.1.6. ԱԲՀ-ի հեռավար ուսուցմամբ ուսումնառողների ամփոփիչ գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգ)

(Հիմք՝ Հավելված 2.1.1. Ավարտական քննական հանձնաժողովի զեկույցների վերլուծություն)

Ցուցանիշ 7. Կլինիկական պրակտիկայի ուսանողի պորտֆոլիո:

Համաձայն հավատարմագրման փորձագիտական զեկույցում «Մասնագիտական կրթական ծրագրեր» չափանիշի վերաբերյալ ներկայացված խորհրդատվության (Ներդնել ուսանողների պորտֆոլիո՝ որպես գնահատման միջոց՝ պարբերաբար մշտադիտարկելով ուսանողների ձեռքբերած հմտությունները և ուսումնառության ընթացքում առկա խնդիրները)՝ ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խումբը կազմել է պրակտիկայի թղթապանակ, որը հաստատվել է Գիտխորհրդի կողմից 31.08.2020թ.: Այն մինչ գիտխորհրդին ներկայացնելը քննարկվել է ներքին շահակիցների շրջանում, առկա են ամբիոնների նիստերի արձանագրություններ: Կիրառվելու է 2020-2021 ուստարվա ուսումնական պլանով պրակտիկա անցնող ուսանողների շրջանում:

(Հիմք՝ Հավելված 2.1.6. ԱԲՀ-ի Պրակտիկայի պորտֆոլիո)

Այսպիսով, «Կրթական գործունեության» համար սահմանված՝ «Վերանայել կրթական գործող ծրագրերը՝ համապատասխանեցնելով ազգային և միջազգային կրթական չափորոշիչներին ու աշխատաշուկայի պահանջներին» խնդիրն, ըստ ԳԱՑ-երի, իրականացվել է, առկա են նաև պլանավորման փուլում գտնվող գործողություններ:

Խնդիր 2.2. Բարելավել առարկայական դասընթացներին վերաբերող փաստաթղթերը:

Ցուցանիշ 1. Ամփոփիչ ատեստավորման կարգ:

2020-2021 ուստարվա ԱԲՀ-ի անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով «Բուժական գործ» մասնագիտությամբ առաջին շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվել է 04.02.2020թ.-ին գիտխորհրդով հաստատված «ԱԲՀ-ի հեռավար ուսուցմամբ ուսումնառողների ամփոփիչ գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգ»-ի համաձայն:

(Հիմք՝ Հավելված 2.1.1. Ավարտական քննական հանձնաժողովի գեկույցների վերլուծություն)

Ցուցանիշ 2. Կլինիկական պրակտիկաների կարգ:

Հաշվի առնելով ՈԱԱԿ հիմնադրամի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից վերհանված խնդիրները, մասնավորապես, ԱԲՀ-ում կազմակերպվող և անցկացվող պրակտիկաների հետ կապված, ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խումբը վերանայել, իր շահակիցների հետ քննարկել և գիտխորհրդով հաստատել է «ԱԲՀ-ի ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգը»: Այն կիրառվելու է «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով՝ 2020-2021 ուստարվա ուսումնական պլանով սովորողների համար:

Պրակտիկաներից ուսանողների բավարարվածությունը գնահատելու նպատակով մշակվել է «*Պրակտիկայից ուսանողների բավարարվածության գնահատման կանոնակարգ և հարցաթերթ*»: Այն նույնպես դեռ չի կիրառվել:

Ցուցանիշ 3. Վերանայված ՄԿԾ-եր: Տես խնդիր 2.1-ի ցուցանիշ 4-ը:

Ցուցանիշ 4. Առարկայական նկարագրեր, ծրագրեր:

(Հիմք՝ Հավելված 2.2.4. ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խմբի արձանագրություն)

Ցուցանիշ 5. Դասալսումների նոր կարգ:

10.04.2020թ.-ին հաստատված «*ԱԲՀ-ում դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման ընթացակարգի*» համաձայն դասալսումներ իրականացվել են 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակում: Ըստ երևույթին, ներքին տեղեկացվածության խնդրի հետ կապված, ամբիոնները շարունակել են նախկինում գործող դասալսումների ձևաչափով աշխատել նաև 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում:

Բոլոր ամբիոններում իրականացված դասալսումների արդյունքները դեռ չեն վերլուծվել:

Այսպիսով, «Կրթական գործունեության» համար սահմանված խնդիր 2.2-ը՝ «Բարելավել առարկայական դասընթացներին վերաբերող փաստաթղթերը», ըստ ԳԱՑ-երի, իրականացվել է, առկա են նաև ընթացքի մեջ գտնվող գործողություններ:

Խնդիր 2.3. Ապահովել Համալսարանում որակյալ կադրային ներուժ:

Ցուցանիշ 1. ՊԴ կազմի պաշտոնի անձնագիր:

(Հիմք՝ Հավելված 6.1. Պաշտոնի անձնագիր)

Ցուցանիշ 2. Պահուստային դասախոսների էլ. բազա:

Հիմք ցուցանիշներ 1-2-ի համար՝ Հավելված 6.2. ՄՌԿ և ընդհանուր բաժնի տարեկան հաշվետվություն)

Ցուցանիշ 3. ՊԴ կազմի խրախուսման կարգ:

2020-2021 ուստարում, հիմք ընդունելով *«ԱԲՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի խրախուսման կազմակերպման կարգի»* 3.5 կետը, կրթության, գիտության և բժշկության ոլորտում իր անբասիր աշխատանքի և համալսարանի զարգացման գործում մեծ ավանդի ներդրման և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ բ.գ.դ. պրոֆեսոր Է. Մինասյանը ռեկտորի հրամանով պարգևատրվել է Ավանդական համալսարանի անվանական պատվոգրով: Համալսարանի երաշխավորությամբ Է. Մինասյանը ԿԳՍՄ նախարարության կողմից ևս արժանացել է պատվոգրի:

Համալսարանը շարունակում է իր աշխատակիցների խրախուսման քաղաքակա-նությունը:

(Հիմք՝ Հավելված 2.3.3. Է. Մինասյանի պարգևատրման հրամանները՝ ռեկտոր և ԿԳՄՍ, 15.03.2021թ.***)***

Ցուցանիշ 4. ՊԴ կազմի վերապատրաստման կարգ:

Ցուցանիշ 5. ՄՌԿ քաղաքականություն: (ՄՌԿ քաղաքականությունից շահակիցների բավարարվածության վերլուծություն կիրականացվի 2022-2023թթ.)

Ցուցանիշ 6. Օտար լեզվի իմացությամբ որակյալ դասախոսական կազմ:

Հիմք ցուցանիշներ 4-6-ի համար՝ Հավելված 6.2. ՄՌԿ և ընդհանուր բաժնի տարեկան հաշվետվություն)

Այսպիսով, «Կրթական գործունեության» համար սահմանված խնդիր 2.3-ը՝ «Ապահովել Համալսարանում որակյալ կադրային ներուժ», ըստ ԳԱՑ-երի իրականացվել է, առկա են նաև պլանավորման փուլում գտնվող գործողություններ:

Խնդիր 2.4. Բարձրացնել ԱԲՀ-ում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը:

Ցուցանիշ 1. Շրջանավարտների էլ. բազա:

«*Կրեդիտային համակարգ*» ներքին էլեկտրոնային ծրագիրը հնարավորություն է տալիս ավտոմատ ունենալ շրջանավարտների էլ. բազա: Բացի այդ, ԱԲՀ-ի ուսումնական մասը հավաքագրում է տեղեկատվություն բոլոր տարիների շրջանավարտների զբաղվածության մասին: Նշենք, որ այդ տեղեկատվությունը օգտագործվում է համալսարանի ՊԴ կազմի համալրման, պրակտիկաների անցկացման և այլ նպատակներով:

Վերջերս կատարվել է վերլուծություն ԱԲՀ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, որտեղ օգտագործվել է այդ մեծածավալ տեղեկատվությունը:

(Հավելված 2.4.1. Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ մոնիտորինգ)

Ցուցանիշ 2. Ուսանողների խորհրդատվական օժանդակ ծառայություն:

Դեկանի անմիջական նախաձեռնությամբ և վերահսկողությամբ ներդրվել են ուսանողների կրթական կարիքների վերհանման հետևյալ մեխանիզմները.

- Ուսանողներին ուսումնառության ընթացքում օժանդակելու նպատակով կցվում են ուսումնական խորհրդատուներ:
- Համալսարանում ուսումնական խորհրդատուների գործունեությունը կանոնակարգված է:
- Ուսումնական խորհրդատուն ուսանողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին և պարտականություններին, համալսարանում գործող և առաջին հերթին ուսանողներին առնչվող կանոնակարգերին և կարգերին, ուսանողի ուղեցույցին, գրադարանից օգտվելու կանոններին և այլն: Ուսումնական խորհրդատուն՝ վերահսկում է իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը, օգնում նրանց՝ հաղթահարելու ուսման ընթացքում ծագած դժվարությունները, լիարժեք յուրացնելու կրթական ծրագիրը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար կազմակերպում է խորհրդատվություններ՝ համաձայն հաստատված ժամանակացույցի, հերթապահության գրաֆիկի և այլն:
- Ուսանողական խորհրդի կողմից ակտիվ աշխատանքներ են տարվում ուսանողների կարիքների վերհանման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում կազմակերպվում են հանդիպում-քննարկումներ անմիջապես դեկանի հետ:
- Պլանավորվում է ուսումնական խորհրդատուների գործունեությունից ուսանողների բավարարվածության գնահատում ուսանողական տարբեր հարցումների միջոցով:

(Հիմքեր՝ Հավելված 2.4. 2.1 «Խորհրդատուների գործունեության» կանոնակարգ, Հավելված 2.4. 2.2 Արտաքին կապերի բաժնի հաշվետվություն էջ 3, Դեկանի կողմից ներկայացված հիմքեր):

Ցուցանիշ 3. Համագործակցության գործող պայմանագիր կամ հուշագիր:

25.09.2020 թվականին կնքվել է եռակողմ պայմանագիր Ավանդական բժշկության համալսարանի, «Արևելյան Լոնդոնի քոլեջ»-ի և "Campus International"-ի միջև: Պայմանագիրը կնքվել է 6 տարի ժամկետով՝ հայերեն և անգլերեն տարբերակներով: Ըստ պայմանագրի՝ ուսանողները կարող են փոխադրվել ԱԲՀ՝ համաձայն ՀՀ Կառավարության 25.08. 2011 թվականի №1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» կարգի: Ուսանողները պետք է համապատասխանեն ԱԲՀ-ի փոխադրման պահանջներին՝ ունենալով ոչ ավելի, քան 20 կրեդիտ ակադեմիական տարբերություն:

16.06.2021 թվականին կնքվել է եռակողմ պայմանագիր՝ «Ավանդական բժշկության համալսարան»-ի, ի դեմս ռեկտոր՝ կ.գ.թ., պրոֆեսոր Նորիկ Սարիբեկյանի, «Սըքսես Փոինթ» քոլեջի, ի դեմս գործադիր տնօրեն՝ Ֆինաս Կունդիլի և երրորդ կողմ՝ «Կամպուս Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի, ի դեմս Աշոկ Կարուվարաթոդիի միջև: Պայմանագիրը կխթանի ուսանողների ակադեմիական շարժունությունը և հնարավորություն կընձեռի "Success Point" քոլեջի ուսանողներին շարունակել ուսումը Ավանդական բժշկության համալսարանում:

2021 թվականի հուլիսի 16-ին Լեհաստանի Բիդգոշչ քաղաքի "WSG" համալսարանի ռեկտորի և մյուս ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում կնքվել է *փոխըմբռնման հուշագիր* Ավանդական բժշկության և WSG համալսարանների միջև՝ հաստատելով հետազոտական, կրթական և մշակութային կապեր համալսարանների գիտական անձնակազմի և ուսանողների միջև:

(Հիմք՝ Հավելված 2.4. 2.3. Պայմանագրեր 3)

Ցուցանիշ 4. Մշակված և հրատարակված ուսանողի ուղեցույց:

2020-2021 ուստարվա ընթացքում դեկանի, ուսխորհրդի ներկայացուցչի, որակի ապահովման առաջատար մասնագետի կողմից վերանայվել է ԱԲՀ-ի անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով ուսումնառողների համար նախատեսված ուղեցույցը, որը գործում էր 2018-ից: Վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված էր համալսարանի գործունեությունը կանոնակարգող որոշ փաստաթղթերի վերանայմամբ, որոշ տվյալների արդիականացմամբ, որոնք ընդգրկված էին գործող «Ուսանողի ուղեցույց»-ում:

10.04.2021թ. ԱԲՀ-ի գիտխորհրդով հաստատված «Ուսանողի ուղեցույց»-ի մասին ուսանողներին իրազեկումը հանձնարարվել է դեկանին, ուսումնական մասի վարիչին, կուրսերի խորհրդատուներին, Ուսխորհրդին:

Այսպիսով, «Կրթական գործունեության» համար սահմանված խնդիր 2.3-ը՝ «Բարձրացնել ԱԲՀ-ում ուսումնառությունից և ուսանողական օժանդակ ծառայություններից ուսանողների գոհունակության մակարդակը», ըստ ԳԱՑ-երի իրականացվել է, առկա են նաև պլանավորման փուլում գտնվող գործողություններ:

Ամփոփում

Այսպիսով, ըստ Համալսարանի ռազմավարական ծրագրի «Կրթական գործունեություն» չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներն իրականացվում են և միտված են գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-ի) ձեռքբերմանը:

ՆՊԱՏԱԿ 3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Խնդիր 3.1. Համալրել ԱԲՀ-ի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները:

Ցուցանիշ 1. Արդիականացված գրադարան:

(Հիմք՝ Հավելված 3.1. Գրադարանավարի զեկույց %)

Ցուցանիշ 2. Ֆինանսական ռեսուրսների բաշխում ըստ ՌԶԾ-ի:

(Հիմք՝ Հավելված 3.2. Բյուջեի տարեկան կատարողական %)

Ցուցանիշ 3. Գործող փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ:

Տե՛ս կառավարում և վարչարարություն 1-ին չափանիշի ցուցանիշ 6-ը:

Ցուցանիշ 4. Տարեկան հարցումների արդյունքներ:

2020-2021 ուստարում ԱԲՀ-ում անցկացվել են հարցումներ միայն տվյալ տարվա շրջանավարտների շրջանում: Շրջանավարտների կողմից գնահատվել են կրթական գործընթացի կրթական, օժանդակ և վարչական բաղադրիչներ:

Կրթական բաղադրիչի շրջանակում ԱԲՀ շրջանավարտները գնահատել են իրենց բավարարվածությունը՝ ստացած տեսական գիտելիքներից և գործնական հմտություններից, մասնագիտական կարողություններից, պրակտիկաների օգտակարությունից, գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից:

Օժանդակ բաղադրիչի շրջանակում շրջանավարտները գնահատել են իրենց բավարարվածությունը լսարանային պայմաններից, լաբորատորիաների կահավորանքից, գրադարանից, համացանցի մատչելիությունից:

Վարչական բաղադրիչը ներառել է ԱԲՀ ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի գործունեությունը, ուսանողական կառույցների գործունեությունը, ինչպես նաև ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգը:

(Հիմք՝ Հավելված 3.5. ԱԲՀ-ի շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծություն)

Այսպիսով, *«Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ»-ի համար սահմանված խնդիր 3.1-ը՝ «Համալրել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները», ըստ ԳԱՑ-երի, հիմնականում իրականացվել է, առկա են նաև պլանավորման փուլում գտնվող գործողություններ, ինչպիսին է, օրինակ՝ գործող փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը:*

Խնդիր 3.2. Համալրել և կատարելագործել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները:

Ցուցանիշ 1. Ռեսուրսների գնահատման զեկույց:

Համալսարանում առկա ռեսուրսների գնահատում վերաբերյալ զեկույց առկա չէ, սակայն մշակվում են ՈՆԱ գործընթացների իրականացման նպատակով բուհի տրամադրած մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարությունը գնահատող մեխանիզմներ: Այս ցուցանիշի ապահովման ժամանակահատված են սահմանվել 2020-2025թթ.:

Ցուցանիշ 2. Արդիականացման պլան:

(Հիմք՝ Հավելված 3.2.2. Բյուջեի տարեկան պլան %)

Ցուցանիշ 3. Ֆինանսական միջոցների հատկացում:

(Հիմք՝ Հավելված 3.2. Բյուջեի տարեկան կատարողական %)

Ցուցանիշ 4. Արդիականացված ԳԲՈՒԿ:

ԳԲՈՒԿ-ի արդիականացման նպատակով առաջարկներ են ներկայացվել ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում, որոնք ընդգրկվել են ԱԲՀ-ի թերությունների վերացման պլան-ժամանակացույցում:

Դիտարկվող ժամանակահատվածում, ցավոք, շոշափելի աշխատանքներ չեն արվել ԳԲՈՒԿ-ի կողմից:

(Հիմք՝ Հավելված 3.2.4 ԳԲՈՒԿ-ի տարեկան կատարողական)

Ցուցանիշ 5. Արդիականացված համացանց:

Որպես բարելավում՝ «Յուքոմ» ՓԲԸ-ի հետ վերակնքվել է նախկինում գործող պայմանագիրը, որի շրջանակներում համալսարանին հատկացվել է գերարագ ինտերնետ կապ և WiFi ծածկույթի ավելացում:

(Հիմք՝ Հավելված 3.2.5 Նոր պայմանագիր Յուքոմ)

Ցուցանիշ 6. Գրադարանից օգտվելու մատչելիություն:

(Հիմք՝ Հավելված 3.1. Գրադարանավարի հաշվետվություն):

Ցուցանիշ 7. Ուսանողների և դասախոսների շրջանում հարցումներ:

Սահմանվել է առնվազն 4 հարցում՝ 2020-2025 ուստարիների ընթացքում:

Դիտարկվող ժամանակահատվածում անցկացվել է ընդամենը մեկ առցանց հարցում տվյալ տարվա շրջանավարտների շրջանում:

Այսպիսով, «Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ»-ի խնդիր 3.2-ը՝ «Համալրել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները», ըստ ԳԱՑ-երի, կարող ենք փաստել, որ մասամբ է իրականացվել, սակայն շատ աշխատանքներ դեռ ընթացքի մեջ են:

Խնդիր 3.3. Ավելացնել ֆինանսական ներհոսքը՝ որոնել ֆինանսական նոր միջոցներ և իրականացնել դրանց հավասարակշռված և նպատակային կառավարում:

Ցուցանիշ 1. Ֆինանսական միջոցներ ըստ ՌԶԾ-ի:

(Հիմք՝ Հավելված 3.2. Բյուջեի տարեկան կատարողական %)

Ցուցանիշ 2. Ֆինանսական հոսքերը խթանող ծրագրեր:

2020-2025 թթ. համար նախատեսված է առնվազն 1 դրամաշնորհային ծրագիր: Դիտարկվող ժամանակահատվածում նման ծրագիր առկա չէ:

Ցուցանիշ 3. Պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմեր:

Դեռ ամբողջական մշակված չեն:

Ցուցանիշ 4. Ուսանողների առաջադիմության խրախուսման կարգ:

2020-2021 ուստարում բարձր առաջադիմությամբ սովորող 17 ուսանողներ պարգևատրվել են անվանական պատվոգրերով, 1 գերազանց առաջադիմությամբ սովորող ուսանողի ուսման վարձը զեղչվել է 20%-ով, 2 ուսանողի ուսման վարձը զեղչվել է 10%-ով՝ այլ տարակարգերի համաձայն:

(Հիմք՝ Հավելված 3.3.4. Ռեկտորի հրամանները)

Այսպիսով, «Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ»-ի խնդիր 3.3-ը՝ «Ավելացնել ֆինանսական ներհոսքը՝ որոնել ֆինանսական նոր միջոցներ և իրականացնել դրանց հավասարակշռված և նպատակային կառավարում», ըստ ԳԱՑ-երի գնահատման, կարող ենք փաստել, որ մասամբ է իրագործվել:

Ամփոփում

Այսպիսով, ըստ Համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրի *«Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ»* չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներն իրականացվում են և միտված են գործունեության առանցքային ցուցանիշների ձեռքբերմանը:

ՆՊԱՏԱԿ 4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 4.1. Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը:

Ցուցանիշ 1. ԱԲՀ-ի նոր պաշտոնական վեբ կայք:

ԱԲՀ-ի պաշտոնական վեբ կայքի արդիականացման աշխատանքներն ընթացքի մեջ են, հետևաբար, այս ցուցանիշի գնահատման համար շահակիցների կարծիքները, որպես հաշվետվողականության միջոց, բացակայում են:

Ցուցանիշ 2. Ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգ:

- Ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման նպատակով 2020-2021 ուստարում մշակվել և հաստատվել են ներքին շահակիցների շրջանում հարցումների անցկացման կանոնակարգեր՝ իրենց կից ներկայացված հարցաթերթիկներով, որոնք ներառված են «*Ներքին և արտաքին շահակիցների տեղեկատվության ապահովման և հետադարձ կապի քաղաքականություն*» փաստաթղթում:

(Հիմք՝ Հավելված 4.1.2. Հարցումների կանոնակարգեր)

- Համալսարանի յուրաքանչյուր ամբիոն կիրառում է ուսումնական մասի կողմից կազմված «Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների մատյան»: Յուրաքանչյուր ամբիոն ուսուցանվող առարկաների շրջանակում լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներն իրականացնում է ըստ ամբիոններում սահմանված ժամանակացույցի և կատարողների:

(Հիմք՝ Հավելված 4.1.2.1. Լրացուցիչ խորհրդատվությունների մատյան, ժամանակացույց)

Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների կազմակերպման և իրականացման հարցը լսվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին (ամբիոնների քաղվածքներ), կազմվում է խորհրդատվությունների անցկացման ժամանակացույց և փակցվում ամբիոնի ցուցափեղկում՝ ուսանողներին հասանելի լինելու համար: Այս գործընթացը կրում է համակարգված և շարունակական բնույթ:

Դեռևս չի իրականացվել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների արդյունավետության համակարգված գնահատում և վերլուծություն:

Այսպիսով, «*Ուսանողակենտրոն քաղաքականության*» համար սահմանված խնդիր 3.2-ը՝ «*Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը*», ըստ ԳԱՑ-երի գնահատման, կարող ենք փաստել, որ իրականացվում է:

Խնդիր 4.2. Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը:

Ցուցանիշ 1. Արտալսարանային միջոցառումների տարեկան պլան:

(Հիմք՝ Հավելված 4.2. 1.1. Ամբիոնային աշխատանքային պլաններ, հաշվետվություններ)

Ցուցանիշ 2. Ուսանող կառավարման մարմիններում:

(Հիմք՝ Հավելված 10.1.Կառավարման և Գիտական խորհրդի կազմի հրամաններ)

Ցուցանիշ 3. ՄԿԾ անհրաժեշտ վերջնարդյունքներ:

(Հիմք՝ Հավելված 4.2.3. ՄԿԾ-ը վերանայված վերջնարդյունքներ)

Ցուցանիշ 4. Ուսխորհրդի տարեկան պլան:

(Հիմք՝ Հավելված 4.2.4. Ուսխորհրդի տարեկան պլան և տվյալ տարվա հաշվետվություն)

Ցուցանիշ 5. Ըստ պլանի տարեկան միջոցառումներ:

Համավարակով պայմանավորված միջոցառումներ չեն իրականացվել:

Ցուցանիշ 6. Տեղեկատվության բարձրացման միջոցառումների պլան-ժամանակացույց:

Համալսարանում, ճիշտ է, տեղեկատվության բարձրացման միջոցառումների պլան-ժամանակացույց առկա չէ, սակայն թե՛ ուսանողների և թե՛ դասախոսների շրջանում, հատկապես ուսումնական տարվա սկզբին, կազմակերպվում են հանդիպումներ դեկանի, արտաքին կապերի բաժնի ղեկավարի հետ՝ ԱԲՀ-ում գործող մի շարք կարգերի, ուղեցույցների մասին իրազեկելու, ներքին տեղեկատվությունը բարձրացնելու նպատակով:

(Հիմք՝ Հավելված 4.2.6. Դեկանի արձանագրությունները)

Այսպիսով, *«Ընդլայնել ուսանողական ինքնավարությունը, ապահովել ուսանողության մասնակցությունը համալսարանի կառավարմանը» խնդիր 4.2-ի համար սահմանված ԳԱՑ-երի ապահովումը ամբողջական չէ:*

Ամփոփում

Այսպիսով՝ ըստ Համալսարանի ռազմավարական ծրագրի *«Ուսանողակենտրոն քաղաքականություն»* չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներին համապատասխան ոչ բոլոր խնդիրներն են իրականացվել սահմանված ժամկետներում, կան մասամբ իրականացված և ընդհանրապես չիրականացված գործողություններ, որոնք անհրաժեշտ է վերհանել՝ հասկանալու խոչընդոտները կամ, գուցե, դրանց իրագործման ոչ նպատակահարմարությունը:

ՆՊԱՏԱԿ 5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Խնդիր 5.1. Ընդլայնել միջազգայնացման ուղղությամբ արդյունավետ զարգացման և փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումները:

Ցուցանիշ 1. Արտաքին կապերի ՀԾ (համագործակցության ընդլայնում):

Ցուցանիշ 2. Արտաքին կապերի քաղաքականություն (համագործակցության ընդլայնում)

Համալսարանի արտաքին կապերի զարգացման ծրագիր, արտաքին կապերի քաղաքականություն՝ որպես համալսարանի Արտաքին կապերի բաժնի գործունեությունը կարգավորող առանձին փաստաթղթեր, ԱԲՀ-ում առկա չեն, սակայն Արտաքին կապերի բաժինն իր ռազմավարությունն իրականացնում է ԱԲՀ-ի ռազմավարական զարգացման ծրագրի հիման վրա:

Կարող ենք փաստել, որ 2020-2021 ուստարում արդեն իրականացվել է 2020-2025 թվականների համար նախատեսվածը՝ կնքվել է համագործակցության 3 պայմանագիր, հուշագիր:

(Հիմք ցուցանիշ 1-2՝ Հավելված 5.1.1. Արտաքին կապերի բաժնի հաշվետվություն)

Ցուցանիշ 3. Բաժնի վերանայված գործառույթներ:

(Հիմք՝ Հավելված 5.1.3. Արտաքին կապերի բաժնի վարիչի և մասնագետի պաշտոնի անձնագիր)

Ցուցանիշ 4. ՄԿԾ-ի բենչմարքինգի ընթացակարգ:

(Հիմք՝ Հավելված 2.1.5. Բենչմարքինգի գեկույց)

Այսպիսով, խնդիր 5.1-ը՝ *«Ընդլայնել միջազգայնացման ուղղությամբ արդյունավետ զարգացման և փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումները»*, ըստ ԳԱՑ-երի իրականացվում է:

Խնդիր 5.2. Ընդլայնել և խթանել համալսարանի միջազգային կապերի զարգացմանը Եվրոպական, Ասիական և ԱՊՀ-ի ուսումնական հաստատությունների հետ համալսարանական և ծրագրային մակարդակներում:

Ցուցանիշ 1. Համագործակցության ընդլայնում:

(Հիմք՝ Հավելված 5.2. Արտաքին կապերի բաժնի հաշվետվություն)

Խնդիր 5.3. Ընդլայնել և ապահովել կապը հանրության հետ, զարգացնել շարունակական կրթությունը:

Ցուցանիշ 1. Հաշվետվությունների նոր ձևաչափ:

Բոլոր ամբիոնները կազմել են իրենց տարեկան հաշվետվությունները ըստ նոր ձևաչափի: Ընթացքի մեջ է Գիտխորհրդին ներկայացված հաշվետվությունների վերլուծությունը:

(Հիմք՝ Հավելված 5.2.1 Համալսարանի 2020-2021 ուստարվա հաշվետվություն)

Ցուցանիշ 2. Արդիականացված կայք:

(Հիմք՝ Հավելված 5.2.2 Կայքի պատասխանատուի զեկույց)

Ցուցանիշ 3. Ծառայությունների մատուցման կարգ:

Պլանավորվում է:

Այսպիսով, *վերոնշյալ* խնդիրը՝ *«Ընդլայնել և ապահովել կապը հանրության հետ, զարգացնել շարունակական կրթությունը»*, ըստ ԳԱՑ-երի կարող ենք փաստել, որ իրականացվել է մասամբ, քանի որ ցուցանիշ 3-ը բացակայում է:

Ամփոփում

Այսպիսով՝ ըստ Համալսարանի ռազմավարական ծրագրի *«Արտաքին կապեր և միջազգայնացում»* չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներին համապատասխան խնդիրներն իրականացվել են սահմանված ժամկետներում, կան պլանավորվող գործողություններ:

ՆՊԱՏԱԿ 6. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 6.1. Նպաստել ԱԲՀ-ում ՊԴ կազմի մասնագիտական և հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ցուցանիշ 1. Հետազոտությունների առաջընթացի ցուցիչներ:

Հստակեցվել է ԱԲՀ-ի գիտահետազոտական գործունեության ուղղությունները, շեշտադրվել գերակայությունները և դրանց ռազմավարական նշանակությունը տարբեր մակարդակների համար:

(Հիմք՝ Հավելված 6.1.1. Գիտական քարտուղարի տարեկան զեկույց)

Ցուցանիշ 2. Գիտական մասի ռազմավարական պլան:

(Հիմք՝ Հավելված 6.1.1. Գիտական քարտուղարի տարեկան զեկույց):

Այս խնդրին համապատասխան ընտրված ցուցանիշների գնահատման ժամանակահատված են սահմանվել 2020-2025 թթ.: Դիտարկվող ժամանակահատվածում դրանց առնչվող աշխատանքներ չեն տարվել:

Խնդիր 6.2. Խթանել Համալսարանում հետազոտական գործունեությունը:

Այս խնդրի 7 ցուցանիշների գնահատման համար նախատեսված հաշվետվողականություն դիտարկվող ժամանակահատվածում առկա չէ:

Խնդիր 6.3. Խթանել ԱԲՀ-ում հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Ցուցանիշ 1. Միջոցառումների օրացուցային պլան:

2020-2021 ուստարում արտասահմանյան գործընկեր բուհերի և գիտաբժշկական կազմակերպությունների հետ կարճաժամկետ և երկարաժամկետ դասավանդման ծրագրեր կամ սեմինարներ չեն կազմակերպվել:

Ցուցանիշ 2. Գիտական մասի ռազմավարական պլան:

Տես խնդիր 6.1. ցուցանիշ 2:

Ցուցանիշ 3. Գիտ. մասի և ՈւԳԸ-ի միջոցառումներ:

Դիտարկվող ժամանակահատվածում գիտական մասի և ՈւԳԸ-ի հետ համատեղ միջոցառումներ չեն իրականացվել:

Ցուցանիշ 4. ՊԴ կազմի գիտ. աշխատանքներ:

<u>Հիմք՝ Հավելված 6.1.1. Գիտական քարտուղարի տարեկան զեկույց)</u>:

Ամփոփում

Այսպիսով, ըստ Համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրի «*Արդիական հետազոտություններ և նորարարություն*» չափանիշում ներառված նպատակների և դրանց համապատասխան ընդունված ԳԱՑ-երի, հնարավորություն ունեցանք հավաստիանալ, որ սահմանված նպատակներին համապատասխան խնդիրները լիովին չեն իրականացվել, հետևաբար, անհրաժեշտ է բացահայտել գործընթացների իրականացման խոչընդոտները, ինչը կարող է տանել հետագա թիրախների սահմանմանը:

ՆՊԱՏԱԿ 7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Խնդիր 7. Նպաստել ԱԲՀ-ում ՊԴ կազմի մասնագիտական և հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ցուցանիշ 1. ՈՆԱ քաղաքականություն և ընթացակարգ:

Որակի ապահովման քաղաքականությունը գործնականում իրականացվում է հաստատության ռազմավարական պլանին համապատասխան, որակի ապահովման կրթական, գիտահետազոտական, կազմակերպչական տարաբնույթ գործընթացներով՝ բոլոր ստորաբաժանումների և շահակիցների մասնակցությամբ:

<u>(Հիմքեր՝ Հավելված 7.1. ԱԲՀ կրթության որակի ներքին ապահովման քաղաքականություն)</u>

Ցուցանիշ 2. ՈԱ քաղաքականության գնահատում:

ՈԱ քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է համապատասխան գործընթացների համար պատասխանատու մարմինների, ստորաբաժանումների կատարողականների, ինքնավերլուծությունների, հաշվետվությունների քննարկումներով և ներքին ու/կամ արտաքին փորձագիտական եզրակացությունների հիման վրա, որոնց արդյունքում ձևավորվում են վերանայման, բարելավման առաջարկություններ:

ԱԲՀ-ում այն նախատեսված է իրականացնել 2020-2025 թթ. ընթացքում առնվազն 1 անգամ:

Կրթական գործընթացի բոլոր բաղադրիչների որակի վերահսկման նպատակով մշակվել, հաստատվել, լրամշակվել են մի շարք կանոնակարգեր, որոնք տեղադրվել են բուհի պաշտոնական կայքում՝ www.utm.am:

Ցուցանիշ 3. Գործող հետադարձ կապի մեխանիզմ:

Ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության ապահովման և հետադարձ կապի մեխանիզմների մասին են վկայում դեկանի, արտաքին կապերի բաժնի, ՄՌԿ և ընդհանուր բաժնի, գիտքարտուղարի և այլ ստորաբաժանումների արձանագրությունները, հաշվետվությունները:

(Հիմք՝ Հավելված 7.3. Ստորաբաժանումների հաշվետվություններ)

Ցուցանիշ 4. Վերապատրաստման ընթացակարգ:

(Հիմք՝ Հավելված 7.4. Վերապատրաստման կարգ)

Ցուցանիշ 5. Գործող հանձնաժողով և աշխատանքային խմբեր:

Ռեկտորի հրամանով անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր ուստարում կարող են ձևավորվել հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր: Ըստ ժամանակացույցի ներկայացրում են կատարողական զեկույցներ և հաշվետվություններ:

(Հիմք՝ Հավելված 2.1.1. Ավարտական քննական հանձնաժողովի զեկույցների վերլուծություն)

(Հիմք՝ Հավելված 7.5. Հանձնաժողովների զեկույցներ)

Ցուցանիշ 6. Գործող էլեկտրոնային համակարգ:

Տե՛ս Նպ. 1, ցուցանիշ 6:

Ցուցանիշ 7. Ըստ ԱԲՀ-ի նոր գծային կառուցվածքի ՈԱ գործընթացների վերաբերյալ համընդհանուր ընկալում:

2020-2021 ուստարվանից ներդրվել է բոլոր ստորաբաժանումների, այդ թվում նաև ՈԱ համակարգի պլանավորման և կատարողականի նոր ձևաչափ: Աստիճանաբար ձևավորվում է ՊԻԳԲ շրջափուլի մշակույթը:

Ցուցանիշ 8. ԱԲՀ-ի նոր գծային կառուցվածք:

2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում տեղի ունեցավ ԱԲՀ-ի կառուցվածքային փոփոխություն, որի արդյունքում վերանայվեց նաև համալսարանի հաստիքացուցակը:

Հիմք ցուցանիշ 7-8՝ Հավելված 5.2.1 Համալսարանի 2020-2021 ուստարվա հաշվետվություն):

Ցուցանիշ 9. Կարիքների վերհանման, գնահատման վիճակագրական տվյալներ:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման գործող մեխանիզմների արդյունավետությունը գնահատելու նպատակով Համալսարանի ուսանողական խորհուրդը ակտիվ աշխատանքներ է տանում այդ ուղղությամբ: Կազմակերպվում են հանդիպումներ դեկանի, ուսումնական մասի վարիչի, ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի, ինչպես նաև ռեկտորի հետ: Ուսխորհուրդը, դեկանը իրենց հանդիպումներում իրազեկում են ուսանողներին իրենց պարտականությունների և իրավունքների մասին, ներկայացնում գիտելիքների գնահատման և ակադեմիական ազնվության կարգերը, ուսանողի ուղեցույցը և այլն:

2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակում հարցումների միջոցով ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների արդյունավետության գնահատում և վերլուծություն չի իրականացվել:

Դիտարկվող ժամանակահատվածում համալսարանում ՈԱ պատասխանատուների կարիքների վերհանման նպատակով ևս կոնկրետ աշխատանքներ չեն տարվել, սակայն ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի և ՈԱ առաջատար մասնագետի կողմից տրամադրվել են որակի խնդիրների վերաբերյալ ֆորմալ և ոչ ֆորմալ խորհրդատվություններ պրոֆեսորա-դասախոսական, օժանդակ և վարչական անձնակազմին:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը մասնակցել է տարբեր հանդիպումների, քննարկումների, որոնք կազմակերպվել են հիմնականում ՈԱԱԿ հիմնադրամի կողմից և արդյունքները ներկայացրել գործընկերներին:

2020-2021 ուստարում ներքին և արտաքին շահակիցների շրջանում կարիքների վերհանման համակարգված և փաստագրված գործընթաց չի իրականացվել, հետևաբար, վիճակագրական տվյալները բացակայում են:

Ցուցանիշ 10. Գործող ՊԻԳԲ շրջափուլ:

Տե՛ս Նպ. 1, ցուցանիշ 5:

Ամփոփում

Այսպիսով, դատելով Համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրի *«Որակի ապահովման ներքին համակարգ»* չափանիշում ներառված նպատակների իրականացման արդյունքներից և ԳԱՑ-երից, կարող ենք փաստել, որ ՈՆԱ համակարգը սահմանված վերջնարդյունքներին հասնելու համար դեռ շատ քայլեր ունի իրականացնելու: